ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
Երևանի պետական համալսարանի
ակադեմիական/ուսումնական գծով
պրոռեկտոր՝
Է. Ասրիյան

«10» 05. 2022 թ.

ԿԱՐԾԻՔ

առաջատար կազմակերպություն

Տաթևիկ Վազգենի Շահինյանի «Բանկային ծառայությունների զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.03 – «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Քննարկմանը մասնակցում էին՝ «Ֆինանսահաշվային» ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր Հ. Մնացականյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Վ. Բոստանջյանը, տ.գ.թ., դոցենտ Գ. Կիրակոսյանը, տ.գ.թ., դոցենտ. Թ. Հովակիմյանը, տ.գ.թ., ասիստենտ Ա. Մուրադյանը, տ.գ.թ. ասիստենտ Գ. Մնացականյանը, ավագ լաբորանտ Ա. Սարգսյանը:

Ատենախոսության թեմայի արդիականությունը. Բանկային ծառայությունների ներքին ու միջազգային շուկաներում օրեցօր աճող մրցակցությունը բանկերից պահանջում է մշտապես ընդլայնել մատուցվող հիմնական ծառայությունների ցանկն ու կատարելագործել սպասարկման որակները:

Անհնար է պատկերացնել երկրի կայուն տնտեսական զարգացումն առանց բանկային համակարգում նորարարական տեխնոլոգիաների կիրառման: Նորարարական բանկային տեխնոլոգիաների ու ծառայությունների ներդրումն ու առկա ծառայությունների զարգացումը բանկային եկամուտների մեծացման կարևորագույն աղբյուրներն են:

Բանկային ծառայությունների կատարելագործման, ինչպես նաև նորարարական տեխնոլոգիաների ու հայեցակարգերի ներդրման հարցերը բանկային գործունեությանը վերաբերող տեղական աղբյուրներում բավականաչափ ուսումնասիրված չեն, ինչն էլ պայմանավորել է թեմայի ընտրության արդիականությունն ու հրատապությունը:

Ատենախոսության նպատակը և խնդիրները. Ատենախոսության հիմնական նպատակն է << բանկային ծառայությունների ու դրանց զարգացման հեռանկարների ուսումնասիրությունը՝ ծառայությունների տեսականու ընդլայնման և դրանց ծախսատարության կրճատման համատեքստում:

Նշված նպատակին հասնելու հեղինակը կարևորել է հետևյալ խնդիրները.

- Մասնագիտական գրականության, ինչպես նաև առկա վերլուծությունների հիման վրա պարզաբանել բանկային ծառայությունների տնտեսական բովանդակությունը, դրանց դերն ու նշանակությունը << տնտեսության մեջ:
- << բանկային ոլորտի հիմնական ֆինանսական ցուցանիշների հետազոտության արդյունքում բացահայտել բանկերի կայունության ապահովմանն ուղղված << ԿԲ միջոցառումների արդյունավետությունը:
- Բանկային ծառայությունների ձևավորման ու զարգացման միջազգային փորձի ուսումնասիրությունների հիման վրա քննարկել << բանկային համակարգի բարեփոխման ուղիները:
- Առևտրային բանկերի ակտիվային ու պասիվային գործառնությունների էության քննարկման ու վերլուծությունների հիման վրա դիտարկել դրանց կատարելագործմանն ուղղված հնարավոր ուղիները:

- ՀՀ բանկային համակարգում առաջացող հիմնական ռիսկերի բացահայտման ու հետազոտությունների հիման վրա քննարկել ռիսկերի կառավարմանն ուղղված ՀՀ ԿԲ ռազմավարական մոտեցումները:
- ՀՀ բանկերի կողմից իրականացվող լիզինգային և ֆակտորինգային ծառայությունների ուսումնասիրությունների, ինչպես նաև մեր կողմից իրականացված սոցիոլոգիական հարցումների հիման վրա առաջարկել մատուցվող ծառայությունների կատարելագործման նոր մոտեցումներ,
- Ներկայացնել բլոկչեյն և բաց բանկինգ նորարարական տեխնոլոգիաների կիրառության առավելություններն ու հիմնավորել բանկային ծառայությունների կատարելագործման ու զարգացման գործում նորարարական տեխնոլոգիաների կիրառության անհրաժեշտությունը:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Այն շարադրված է համակարգչային շարվածքով 139 էջի վրա՝ առանց հավելվածների, պարունակում է 24 գծապատկեր, 7 աղյուսակ և 2 նկար:

Հեղինակը ատենախոսության ներածությունում հիմնավորել է ատենախոսության թեմայի արդիականությունը, ձևակերպել նպատակը և խնդիրները, հստակեցրել ատենախոսության օբյեկտը և առարկան: Ներկայացրել է հիմնական արդյունքները և գիտական նորույթը, դրանց տեսական ու գործնական նշանակությունը, ինչպես նաև արդյունքների հրապարակումը, ատենախոսության կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսության առաջին՝ «Բանկային ծառայությունների տնտեսական բովանդակությունը և կազմակերպման ձևերը» գլխում, ներկայացրել է բանկային ծառայությունների տնտեսական բովանդակությունը, վերլուծել ՀՀ բանկային ոլորտը բնութագրող հիմնական ֆինանսական ցուցանիշները, ներկայացրել բանկային ծառայությունների զարգացման միջազգային փորձը: Հեղինակը, հիմնվելով

տարբեր հեղինակների մոտեցումների վրա տվել է «բանկային ծառայություն», «բանկային գործառնություն» և «բանկային արտադրանք» հասկացությունների սահմանումները:

Ատենախոսության երկրորդ՝ «ՀՀ բանկային համակարգում մատուցվող ծառայությունների քննական վերլուծություն» գլխում, հեղինակն ուսումնասիրել է առևտրային բանկերի ակտիվային ու պասիվային գործառնությունները, վերլուծել լիզինգային և ֆակտորինգային ծառայություններն ու դրանց զարգացման հնարավորությունները, ինչպես նաև ներկայացրել է ՀՀ բանկային համակարգում առկա ռիսկերն ու դրանց կառավարման մեխանիզմները:

Ատենախոսության երրորդ՝ «ՀՀ բանկային ծառայությունների զարգացման հեռանկարները դրանց ծախսատարության նվազեցման համատեքստում» գլխում, քննարկվել են ՀՀ առևտրային բանկերի կողմից տրամադրվող ծառայությունների ծախսատարության ու եկամտաբերության խնդիրները, ինչպես նաև մշակվել է բանկային ծառայությունների ինքնարժեքի հաշվարկման նոր մոտեցում: Ուսումնասիրվել է նաև նորարարական տեխնոլոգիաների կիրառմամբ բանկային ծառայությունների ծախսատարության նվազեցման հնարավորությունները:

Ատենախոսության գիտական նորույթը:

- ✓ ՀՀ 17 առևտրային բանկերի, ինչպես նաև 384 առևտրային կազմակերպությունների շրջանում իրականացված սոցիոլոգիական հարցումների հիման վրա ուսումնասիրվել են լիզինգի, մասնավորապես՝ գործառնական լիզինգի պահանջարկի առկայությունը շուկայում, բացահայտվել են դրա ներդրման համար շուկայում առկա բացերը և ստացված արդյունքների հիման վրա առաջարկվել են ոլորտի կարգավորման ուղիներ:
- ✓ Ծառայությունների ծախսատարության և դրանցից ստացվող եկամտաբերության համեմատական վերլուծության հիման վրա վեր են

հանվել ՀՀ բանկային ոլորտում ակտիվների մեծությամբ առաջատար երեք բանկերում առկա շեղումները, և մշակվել է դրանց շտկան համար բանկային ծառայությունների ինքնարժեքի հաշվարկման նոր մոտեցում:

- ✓ Բանկային ծառայությունների մատուցման համաշխարհային փորձի համակողմանի ուսումնասիրման հիման վրա հիմնավորվել է նորարարական տեխնոլոգիաների ներդրման նպատակահարմարությունը՝ ՀՀ բանկերի կողմից մատուցվող ծառայությունների ծախսատարության նվազեցման և եկամտաբերության աճի համատեքստում:

Դիտողություններ աշխատանքի վերաբերյալ.

- Նորույթ 2-ում առաջարկվում է կիրառել ինքնարժեքի հաշվարկման ABCմեթոդը, որը սակայն նախատեսված է կիրառել ոչ ֆինանսական հաստատությունների համար: Լրացուցիչ պարզաբանման անհրաժեշտություն ունի նաև թե ինչ շեղումներ ի նկատի ունի ատենախոսը և ինչպես է դա շտկում, երբ դրանք վերաբերում են տարբեր բանկերին՝ ծառայության տարբեր ինքնարժեքներով և տարբեր ռազմավարություններով:
- 1.1 պարագրաֆում ըստ հեղինակի ավանդներ/ՀՆԱ հարաբերակցության, երաշխավորվող ավանդների հատուցման չափի մեծացումը կարելի է փաստարկել որպես վստահության բարելավմանն ուղղված քայլ: Այս տեսանկյունից կարելի է դիտարկել հաշվետերերի, հաճախորդների քանակի դինամիկան, նաև վարկեր /ՀՆԱ հարաբերակցությունը: Միայն ավանդներ/ՀՆԱ-ն բավարար չէ հիմնավոր կարծիք հայտնելու ֆինանսական համակարգի խորության և երկրի տնտեսական կյանքին բանկերի ներգրավվածության աստիճանի վերաբերյալ:
- 1.2 պարագրաֆում ցանկալի էր ներկայացնել նաև ակտիվների

կառուցվածք, որակ, պարտավորությունների կառուցվածք, սրանցից էլ կախված է թե որքան մատչելի ու որակյալ ծառայություններ կարող են մատուցել բանկերը, որքան ռեսուրսներ կարող են հատկացնել, կամ արդյոք անհրաժեշտ է ու առկա են բավարար ռեսուրսներ ծառայությունների բազմազանեցման, մրցակցային դիրքերի բարելավման կամ ռեսուրսների հավելյալ հատկացումներ կատարելու համար:

- 2.1 պարագրաֆում անհրաժեշտ էր իրականացնել ՀՀ բանկերի ակտիվապասիվային ցուցանիշների առավել խորը վերլուծությունը՝ ներառելով ԿԲ վարած քաղաքականության, առկա պետական պարտառմսերի շուկայի, վերաֆինասավորման տոկոսադրույքի ազդեցությունները:
- 2.2 պարագրաֆում առավել համապարփակ վերլուծության համար անհրաժեշտ էր դիտարկել մի շարք ցուցանիշներ, այդ թվում կանխարգելիչ նորմատիվներ, իրացվելիության ծածկույթի գործակից, զուտ կայուն հասանելի միջոցների, կապիտալի բուֆերներ, ինչպես նաև ՀՀ-ում առկա ռիսկերի մակարդակը, դինամիկան և դրանց ազդեցությունը ծառայությունների շուկայի վրա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացված դիտողությունները չեն ազդում հետազոտության արդյունքների վրա և չեն նվազեցնում աշխատանքի գիտական արժեքը: Դրանք նպատակ ունեն բարձրացնելու Հայաստանի Հանրապետությունում բանկային ծառայությունների զարգացման հեռանկարներին նվիրված հետագա ուսումնասիրությունների արդյունավետությունը:

Տ.Վ. Շահինյանի «Բանկային ծառայությունների զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում» հրապարակային պաշտպանության ներկայացված ատենախոսությունը տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար իրենից ներկայացնում է ինքնուրույն և ամբողջական հետազոտություն: Աշխատանքը հեղինակի հետևողական գիտական հետազոտության արդյունքն է, որն իրականացնելի հանդես է բերել վերլուծական անհրաժեշտ մակարդակ:

Ատենախոսությունը և սեղմագիրը համապատասխանում են ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները: Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են թվով 14 գիտական հոդվածներում:

Այսպիսով, Տաթևիկ Վազգենի Շահինյանի «Բանկային ծառայությունների զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություններին ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ԵՊՀ Ֆինանսահաշվային ամբիոնի դոցենտ,
տ.գ.թ **Թ. Ս. Հովակիմյան**

ԵՊՀ Ֆինանսահաշվային ամբիոնի ասիստենտ,
տ.գ.թ **Ա. Մ. Մուրադյան**

Ստորագրությունները հաստատում եմ՝
ԵՊՀ գիտական քարտուղար, բ.գ.թ. **Մ.Վ. Հովհաննիսյան**